ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2019 թվականի ապրիլի 23-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը՝ «ՏԿՏՏՆ-ՀԲՄԱՇՁԲ-2019/4Շ»

Պատվիրատուն՝ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը, որը գտնվում է ՀՀ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3 հասցեում շինարարական աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՏԿՏՏՆ-ՀԲՄԱՇՁԲ-2019/4Շ ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի վերաբերյալ ստացված հարցադրումը և դրա վերաբերյալ 2019 թվականի ապրիլի 23-ին տրամադրված պարզաբանումը՝

ՀԱՐՑԱԴՐՈՒՄ

1.Չափաբաժին 1-ի ծավալաթերթ -նախահաշվում <<Իջատեղեր և մուտքեր>> ենթաբաժնում բաց է թողնված մեկ իջատեղի մակերեսների քանակը:

2.Չափաբաժին 3-ի կմ 67+240-կմ72+200(ձախ կողմ) և կմ72+200-կմ73+183 ընդհանուր ծավալաթերթ-նախահաշիվներում աշխատանքների քանակները բացակայում են:

3.Հրավերում պայմանագրի նախագծի Պայմանագրի առարկան չի համապատասխանում տվյալ մրցութային ծածկագրի գնման առարկայի բնութագրին:

4.Հայտի ապահովման բանկային երաշխիքի համար առանձին տող նախատեսված չէ,այն կարո՞ղ ենք կցել ցանկացած տողում:

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

1-ին կետի վերաբերյալ

Հայտնում ենք, որ բաց թողնված մեկ իջատեղի մակերեսը թեև ամփոփագրով հաշվարկված է, սակայն ծավալաթերթ -նախահաշվում ներառվել են միայն կարևոր նշանակություն ունեցող իջատեղերի մակերեսները:

2-րդ կետի վերաբերյալ

Scanned by CamScanner

Հայտնում ենք, որ Ձեր դիտարկումը պատվիրատուի կողմից ընդունելի է, որի փոփոխման հնարավոր տարբերակը ուսումնասիրվում է պատվիրատուի կողմից:

3-րդ կետի վերաբերյալ

Հայտնում ենք, որ հրավերի բոլոր հատվածներում հստակ նշվել է գնման առարկա հանդիսացող ճանապարհահատվածները, հետևաբար պայմանագիր կնքելու պարագայում պայմանագրում կնշվի այն չափաբաժնով նախատեսված ճանապարհահատվածը, որի մասով կազմակերպությունը կճանաչվի ընտրված <<հաղթող>> մասնակից:

4-րդ կետի վերաբերյալ

Հայտնում ենք, որ բանկային երաշխիք հանդիսացող փաստաթուղթը հնարավոր է PDF կամ ZIP տարբերակով կցել ցանկացած հավելվածի հետ:

Գնումների համակարգող՝ Ա. Պետրոսյան

Հեռախոս 010 59 00 48
Էլ. փոստ ani.petrosyan@mtct.am

Scanned by CamScanner